

## ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

#### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ 65 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՉԱՓՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 ապրիլի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Նարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի /զեկուցող/, Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա.Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի փետրվարի 17-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության, Նայասրանի Նանրապետության կենտրոնական բանկի եւ Եվրոպական միության միջեւ 65 միլիոն եվրոյի չափով վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի

Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 4 ապրիլի 2011թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հերազոտելով վարկային համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** Նայասրանի Նանրապետության, Նայասրանի Նանրապետության կենտրոնական բանկի եւ Եվրոպական միության միջեւ 65 միլիոն եվրոյի չափով վարկային համաձայնագիրը /այսուհետ՝ Նամաձայնագիր/ ստորագրվել է 2011թ. փետրվարի 17-ին Լյուքսեմբուրգում՝ ՆՏ ֆինանսների նախարարի եւ ՆՏ կենտրոնական բանկի նախագահի կողմից:

Ըստ Նամաձայնագրի նախաբանի՝ Նամաձայնագիրը կնքվել է Նայասրանի Նանրապետության /այսուհետ՝ Վարկառու/ տնտեսական կայունացմանը նպաստելու եւ վերջինիս վճարային եւ բյուջերային հաշվեկշիռը մեղմելու նպատակով, ինչպես սահմանված է Արժույթի միջազգային հիմնադրամի ընթացիկ ծրագրում:

**2.** Նամաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 16 հոդվածներից, 3 հավելվածներից, որոնք Նամաձայնագրի 12-րդ եւ 16-րդ հոդվածներին համապատասխան հանդիսանում են Նամաձայնագրի անբաժանելի մասը: Նամաձայնագրի անբաժանելի մաս են համարվում նաեւ /հոդված 12/ Եվրոպական միության խորհրդի՝ Վարկառուին մակրոֆինանսական աջակցության տրամադրման մասին 05.12.2009թ. որոշումը, ինչպես նաեւ 2011թ. փետրվարի 15-ին Եվրոպական հանձնաժողովի /այսուհետ՝ Վարկատու/, Նայասրանի եւ ՆՏ կենտրոնական բանկի միջեւ կնքված՝ Վարկառուի կողմից կատարման ենթակա տնտեսական քաղաքականության պայմանների մասին Փոխըմբռնման հուշագիրը եւ Նամաձայնագրի առնչությամբ կնքված ֆինանսական պայմանագրերը:

Քննության առարկա Նամաձայնագրի նախաբանում արձանագրված է, որ Վարկառուն ֆինանսական աջակցություն է հայցել Եվրոպական միությունից՝ պարտավորվելով կատարել տնտեսական քաղաքականության այն պայմանները, որոնք

շարադրված են վերը նշված Փոխըմբռնման հուշագրում: Նամաձայն Նամաձայնագրի նախաբանի՝ ՏՏ կենտրոնական բանկը պետք է գործի որպես Վարկառուի գործակալ:

Նամաձայնագրի 1-ին հոդվածը սահմանում է, որ Վարկատուն Վարկառուին պետք է փրամադրի վարկ եվրոյով՝ 65 միլիոն ընդհանուր հիմնագումարի չափով, որը կհարկացվի երկու մասնաբաժնով՝ հիշարակված Որոշման, Փոխըմբռնման հուշագրում եւ սույն Նամաձայնագրում սահմանված պայմաններին համապատասխան: Առաջին մասնաբաժնի հիմնագումարը կազմում է 26 միլիոն եվրո, իսկ երկրորդ մասնաբաժինը՝ 39 միլիոն եվրո: Երկրորդ մասնաբաժնի վճարումը չի կատարվի ավելի վաղ, քան առաջին մասնաբաժնի փրամադրումից առնվազն 3 ամիս հետո:

Վարկի վճարման ժամկետը չպետք է գերազանցի փասնիինգ փարին /հոդված 2/:

Ըստ Նամաձայնագրի 3-րդ հոդվածի՝ Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ, Վարկատուին ծանուցելով, ամբողջությամբ կամ մասամբ անմիջապես չեղյալ համարել վարկի չվճարված մասնաբաժինը, իսկ Վարկատուն՝ ծանուցելով այդ մասին Վարկառուին, կարող է ամբողջովին կամ մասամբ անմիջապես կասեցնել եւ/կամ չեղյալ համարել վարկի չվճարված մասնաբաժինը, եթե առկա են նշված հոդվածում նախատեսված դեպքերը:

Նամաձայնագրի 4-րդ հոդվածը նվիրված է վարկի օգտագործմանը, հարկացման գույք գումարին վերաբերող խնդիրներին եւ նախապայմաններին: Մասնավորապես, սահմանված է, որ Վարկառուն կարող է գրավոր մասնաբաժին հայցել՝ օգտագործելով Նամաձայնագրի 1-ին հավելվածում ներկայացված ձեւը: Վարկառուի կողմից 1-ին հավելվածում, այն է՝ միջոցների սրացման հայցադիմումի մեջ նշված բնութագրիչների շրջանակում Վարկատուն պետք է Վարկառուին փոխանցի ծանուցում՝ Նամաձայնագրի 2-րդ հավելվածում ներկայացված ձեւով /ընդունման ծանուցման ձեւ/, որպեսզի սահմանված կլինեն հայցվող մասնաբաժնի հիմնական ֆինանսական պայմանները:

Ֆինանսական գործարքի իրականացումից հետո միջոցների սրացման հայցադիմումը, ընդունման ծանուցումը եւ յուրաքանչյուր ֆինանսական գործարքի հետ կապված պայմանագրերի պարզեցումները պետք է հանդիսանան որպես Վարկատուի եւ Վարկառուի միջեւ կնքված ֆինանսական պայմանագիր, որը կհանդիսանա սույն Նամաձայնագրի անբաժանելի մասը:

Նամաձայնագրի նշված հոդվածում անհրաժեշտ մանրամասնությամբ շարադրված են այն փոխադարձ պարտավորությունները, որոնք վարկի մասնաբաժինների հարկացման առնչությամբ կրում են Կողմերը:

**3.** Նամաձայնագրի 5-րդ եւ 7-րդ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ Նամաձայնագրով Վարկառուն սրանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ, քանի որ վարկի յուրաքանչյուր մասնաբաժին հանդիսանում է Վարկառուի չապահովված, անմիջական, ոչ պայմանական եւ ընդհանուր պարտավորություն: Վարկառուն պետք է հետ վճարի յուրաքանչյուր մասնաբաժնի հիմնագումարը՝ փոխապվության պայմանագրերով սահմանված եւ Վարկատուի կողմից իրեն ծանուցված ամսաթվերին եւ պայմաններին համապատասխան: Նամաձայն Նամաձայնագրի 5-րդ հոդվածի՝ Կողմերն սրանձնում են կոնկրետ այլ պարտավորություններ, որոնք նախատեսված են նույն հոդվածի 2-5-րդ կետերում:

Վարկառուն պարտավորվում է յուրաքանչյուր մասնաբաժնի համար վճարել փոխապվության պայմանագրերով սահմանված եւ Վարկատուի կողմից իրեն ծանուցված դրույքաչափով, ամսաթվերին եւ պայմաններին համապատասխան /հոդված 6/:

**4.** Նամաձայնագրի 8-րդ հոդվածում ամրագրված է, որ Վարկառուի կողմից կատարվելիք բոլոր վճարումները՝ հիմնագումարի, փոխումների, վնասի փոխհատուցման գումարների եւ սույն Նամաձայնագրով վճարման ենթակա այլ գումարների մասով, պետք է վճարվեն՝ ազատված լինելով բոլոր փեսակի հարկերից, միջնորդավճարներից եւ ցանկացած այլ պահումից Նամաձայնագրի գործողության ողջ ժամանակաշրջանում: Վարկառուի կողմից բոլոր վճարումները պետք է կատարվեն եվրոյով՝ Վարկատուի՝ եվրոյով բացված հաշվեհամարին: Վարկառուն պետք է Վարկատուին ուղարկի Վարկառուի գործակալին ուղարկված իր վճարման հանձնարարականների պատճենները:

**5.** Նամաձայնագրի 9-րդ եւ 10-րդ հոդվածները նվիրված են Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման առանձին դեպքերի իրավական հետեւանքներին, ինչպես նաեւ սպուգումների իրականացման պայմաններին եւ կարգին, խարդախության կանխարգելմանը ու աուդիտին առնչվող՝ Կողմերի փոխադարձ պարտավորություններին: Մասնավորապես, Վարկառուն եւ Վարկառուի գործակալը պետք է փրամադրեն համապատասխան փողերի կազմակերպություններ եւ փաստաթղթեր, որոնք կարող են Վարկատուի

կողմից պահանջվել գնահատումների, ստուգումների կամ աուդիտի նպատակով, պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները Վարկատուի հանձնարարություն կրող անձանց աշխատանքը դադարեցնելու համար:

6. Նամաձայնագրով Կողմերը պարտավորվում են Եվրոպական միության գործունեության համաձայնագրի 272-րդ հոդվածին համապատասխան ցանկացած վեճ, որը կարող է ծագել Նամաձայնագրի վավերականության, օրինականության, մեկնաբանման կամ կատարման առնչությամբ, ներկայացնել Եվրոպական միության Ընդհանուր իրավասության դատարանի բացառիկ իրավասությանն ու միջնորդությանը՝ Եվրոպական միության արդարադատության դատարանին դիմելու իրավունքով: Նշված դատարանների վճիռները պետք է լիակատար կերպով իրավաբանորեն պարտադիր եւ հարկադրաբար կիրառելի լինեն Կողմերի համար /Նամաձայնագրի 13-րդ հոդված/: Ըստ Նամաձայնագրի 14-րդ հոդվածի՝ Նամաձայնագիրն ուժի մեջ կմտնի ոչ ուշ, քան Նամաձայնագիրն ստորագրելուց 12 ամիս անց: Եթե Նամաձայնագիրն ուժի մեջ չի մտնում մինչեւ այդ ամսաթիվը, ապա այն այլեւս չի կարող պարտավորեցնող լինել Կողմերի համար:

7. Ըստ ՆՏ ֆինանսների նախարարության տեղեկանքի՝ Նայաստանի Նանրապետությունն ստանձնում է համապատասխան ֆինանսական պարտավորություններ:

Նամաձայնագրի հետագոյության արդյունքները վկայում են, որ Նայաստանի Նանրապետության՝ Նամաձայնագրով ստանձնած պարտավորությունները համահունչ են ՆՏ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին եւ նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի փետրվարի 17-ին ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության, Նայաստանի Նանրապետության կենտրոնական բանկի եւ Եվրոպական միության միջեւ 65 միլիոն եվրոյի չափով վարկային համաձայնագրում ամրագրված

պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 ապրիլի 2011 թվականի  
ՍԴՈ-957